**Անդրեյ Բիտով**



Արձակագիր, ԽՍՀՄ գրողների միության անդամ, երկու անգամ արժանացել է ՌԴ պետական մրցանակի, Պատվո շքանշանի:

Ծնվել է 1937թ. Լենինգրադում (Ս.Պետերբուրգ):

1957թ. ընդունվել է Լենինգրադի երկրաբանության ինստիտուտ: Ստեղծագործել սկսել է ուսանողական տարիներին: Ուսումն ընդհատելով՝ մեկնել է զինվորական ծառայության, այնուհետև վերադարձել և ավարտել 1962թ.:

1965-67թթ. Մոսկվայում մասնակցել է բարձրագույն սցենարային դասընթացին:

1973-74թթ. սովորել է Գրականության ինստիտուտի ասպիրանտուրայում:

1969թ. լույս է տեսնում «Հայաստանի դասեր» գիրքը, այնուհետև «Կյանքի պատկեր» (1972թ.), «Մարդու օրերը» (1976թ.), «Յոթ ուղևորություն» (1976թ.), «Պուշկինյան տուն» (1978թ.) և այլն:

Գրաքննությանը չենթարկվելու պատճառով տևական ժամանակահատված (1978-86թթ.) նրա գործերը չեն տպագրվում: 1986թ.-ից լույս են տեսնում «Վրացական ալբոմ», «Մարդը պեյզաժում» և այլ գրքեր:

Հայտնի է նաև որպես կինոսցենարիստ. 1967թ. եղել է խորհրդա-ճապոնական «Փոքրիկ փախստականը» ֆիլմի համասցենարիստը, 1979թ. գրել է «Հինգշաբթի օրը և այլևս երբեք» ֆիլմի սցենարը:

1997թ. նրան շնորհվել են Երևան քաղաքի պատվավոր քաղաքացի և Երևանի պետական բժշկական համալսարանի պատվավոր դոկտոր կոչումներ:

Ապրում և աշխատում է Մոսկվայում և Սանկտ Պետերբուրգում: